ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

2 (91)

ԵՐԵՎԱՆ

2018

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 2 (91), 2018

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Արա Մարջանյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., ա.գ.ա.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ս.գ.թ.

Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Արա Մարջանյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Սամվել Մանուկյան
Վահագն Ագլյան
Վահրամ Հովյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 2 (91), 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
Ֆրագմենտացված կամ «մինչվեստֆալյան» աշխարհակարգ 5

Արա Մարջանյան
Ադրբեջանի կոսմիկական ծրագրի
հետախուզա-հեռազննման բաղադրիչը 11

Սամվել Մանուկյան
Ինտերնետը և սոցիալական ցանցերը Հայաստանում (2012-2016թթ.) 19

Սամվել Մարտիրոսյան
Հայաստանի դեմ հաքերային հարձակումների մասին 25

Արմեն Ղալեչյան
Տեղեկատվության՝ որպես հզոր զենքի թերընկալման հետևանքները 30

Վահրամ Հովյան
Արաբական Միացյալ Էմիրությունների հայ համայնքը 36

Հուշագիր հեղինակին 43

ՖՐԱԳՄԵՆՏԱՑՎԱԾ ԿԱՄ «ՄԻՆՉՎԵՍՏՖԱԼՅԱՆ» ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳ

Գագիկ Հարությունյան[*]

Հայտնի է, որ դեռևս բոլորովին վերջերս աշխարհում տիրող միաբևեռ աշխարհակարգի պայմաններում ամեն ինչ ենթարկվում էր մեկ կենտրոնի, որն էլ թելադրում էր խաղի կանոնները՝ իր գաղափարախոսական, քաղաքական և տնտեսական պատկերացումներին համապատասխան: Բնականաբար, նման իրադրությունում գրեթե լիովին անտեսվում էին այլ երկրների շահերը, ինչը հանգեցնում էր ծանր հետևանքների: Հետևաբար, որոշ այլախոհ վերլուծաբաններ անթաքույց անհամբերությամբ սպասում էին այն ժամանակներին, երբ աշխարհը վերջապես կդառնա բազմաբևեռ և ժողովուրդները կսկսեն զարգանալ ըստ իրենց քաղաքակրթական և գաղափարախոսական ավանդույթների[1]: Մինչդեռ երկար սպասված բազմաբևեռ կարգի հաստատմամբ գլոբալ քաղաքական հարթությունում զարգացումներն սկսեցին ընթանալ տուրբուլիզացված, անկանոն ռեժիմով, որոնց հետևանքներն էապես ցրեցին «լուսավոր ապագայի» հույսերը: Սկզբում թվում էր, թե տեղի ունեցողն «անցումային շրջանի» հետևանք է, բայց այդ գործընթացը խիստ ձգձգվեց, և շատ բան վկայում է այն մասին, որ ներկա քաղաքական բարքերը դեռևս բավական երկար են գերիշխելու: Միևնույն ժամանակ, արդի իրողությունների բարդությունը նկատելիորեն դժվարացնում է այն հասարակարգի հիմնական բնութագրերը կանխատեսելը, որը հաստատվելու է աշխարհում ներկայիս տուրբուլիզացիայից հետո: Մեր կարծիքով, որպեսզի նմանատիպ պրպտումները գոնե ինչ-որ բանական արդյունք տան, հարկ է փորձել ոչ միայն ադեկվատ ընկալել տեղի ունեցող իրողությունները, այլև, կոնկրետ դեպքերում, նորից վերիմաստավորել ինչպես որոշ «քարացած» տերմիններ, այնպես էլ հասկացություններ:

[*] «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

[1] Տե՛ս, օրինակ, *Г. Тер-Арутюнянц,* «Холодная война – 2» с геоидеологической перспективой, Голос Армении, 04.12.2003, *Г. Тер-Арутюнянц,* Многополярная и ассиметричная Холодная война, Вестник Академии военных наук, М., #4(21), с. 23. 2007.

«Քիքբոքսինգի մրցասպարեզ» կամ «Մինչվեստֆալյան աշխարհ». Հնարավոր է, որ փոքր-ինչ պարզունակ է հնչում պնդումը, որ այսօր աշխարհում ընթանում է պերմանենտ և կոշտ առճակատում: Բնավ պատահական չէ, որ առաջատար մի շարք «ուղեղային կենտրոններ» արդարացիորեն կարծում են, որ ներկայիս՝ արդեն Երկրորդ սառը պատերազմն արդի պայմաններում շատ ավելի դաժան ռեժիմով է ընթանում, քան Առաջինը: Ներկայիս դիմակայությունն անվանում են նաև «հիբրիդային» կամ էլ «հինգերորդ սերնդի», իսկ երբեմն էլ՝ այլ կերպ, կախված մեկնաբանի ճաշակից: Նման առճակատման գլխավոր առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանում գրեթե ջնջված են բոլոր սահմանները, ըստ էության, պատերազմի և խաղաղության միջև[2]: Միանգամայն բնական է, որ նման պայմաններում վերջնականապես արժեզրկվում է միջազգային իրավունքը: Որոշ վերլուծաբաններ ստեղծված իրավիճակը բնութագրում են որպես «պայքար բոլորը բոլորի դեմ», և սրանում ճշմարտություն կա: Այս նույն համատեքստում նշենք, որ աշխարհն այսօր ասոցացվում է արդեն ոչ թե «մեծ շախմատի տախտակի», այլ, ավելի շուտ, «քիքբոքսինգի մրցասպարեզի» հետ: Ակնհայտ է, որ այս ռեժիմով քաղաքականություն վարելու համար նույնպես կպահանջվեն զգալի մտավոր և այլ ռեսուրսներ, բայց և, միևնույն ժամանակ, կպահանջվեն փոքր-ինչ այլ կարողություններ և մտածելակերպ, քան շախմատիստներինն է:

Ստեղծված իրադրությունը շատ բանով կանխորոշվում է նոր տեղեկատվական-թվային տեխնոլոգիաների ստեղծմամբ, որոնք հաճախ թույլ են տալիս հաջողությամբ փոխարինել այն, ինչը կոչվում էր «մտքի փայլատակում»: Միևնույն ժամանակ, այս համատեքստում երբեմն տպավորություն է ստեղծվում, որ եթե նախկինում տեխնոլոգիաների գլխավոր դերը մարդկանց սպասարկելն էր, ապա այսօր մարդկանց վարքը հաճախ թելադրվում է հենց տեխնոլոգիաներով: Ակնհայտ է, որ նման երկվատությունը միշտ չէ, որ նպաստում է ճիշտ որոշումների կայացմանը, և սա վերաբերում է ոչ միայն քաղաքական գործիչներին:

[2] Ջ.Օրուելի «պատերազմը խաղաղություն է» հիանալի արտահայտությանն այսօր տեղին է հավելել նաև «խաղաղությունը պատերազմ է» բառերը (տե՛ս [1]):

Իսկ եթե փորձենք գտնել պատմական անալոգներ և քաղաքական տերմիններով ձևակերպել ներկա աշխարհակարգը, ապա տեղին է զուգահեռ անցկացնել Երեսնամյա պատերազմի ժամանակների մինչվեստֆալյան Եվրոպայի հետ, երբ բոլորը գործում էին ***ad hoc,*** այսինքն՝ հատուկ դեպքի ռեժիմով, ելնելով կոնկրետ իրավիճակից: Իսկ 17-րդ դարի Եվրոպայի հետ անալոգիան արդիականացնում է ներքաղաքակրթական ֆրագմենտավորման (հատվածայնացման) հարցերը, և այստեղ տեղին է սկսել հենց Արևմուտքից, որտեղ այդ գործընթացներն այսօր ընթանում են:

«Գործընթացն սկսվել է». Գլոբալ տեղեկատվական հարթությունում լայնորեն ընդունված «Արևմուտք» հասկացությունը մինչև վերջերս ասոցացվում էր միասնական գաղափարախոսական, քաղաքական և տնտեսական համակարգի հետ, որի հիմքը կազմում էին ԱՄՆ-ը և ԵՄ-ը: Սակայն երկու շրջադարձային իրադարձություն՝ Մեծ Բրիտանիայի դուրս գալը ԵՄ-ից և Դ.Թրամփի նախագահ ընտրվելը (ինչն արդարացիորեն կնքել են որպես «Բրեքսիթ-2»), նկատելիորեն փոխել են նման ընկալումը: Պարզվեց, որ բրիտանացիները բնավ չեն պատրաստվում իրենց եվրոպացի դաշնակիցների հետ կիսել գաղափարախոսական և միգրացիոն ճգնաժամի (որը, ըստ կանխատեսումների, տեսանելի ապագայում կարող է հանգեցնել մայրցամաքային Եվրոպայի կրոնաէթնիկական, հետևաբար և քաղաքական կերպարի փոփոխության[3]) հետևանքները: Բրիտանիայից հետո նոր իրողություններին արձագանքեցին նաև ամերիկացիները: Հատկապես ակտիվ էր գործում ամերիկյան իսթեբլիշմենթի այն հատվածը, որը միշտ այս կամ այն կերպ պայքարում էր ամերիկակենտրոն, երբեմն՝ մեկուսացման հասնող քաղաքականության համար: Արդյունքում՝ նախագահ ընտրվեց Դոնալդ Թրամփը, որը, հաղթահարելով (երբեմն՝ ոչ այնքան հաջող) բազմաթիվ ընդդիմախոսների համառ դի-

[3] Տե՛ս, օրինակ, http://forum.syntone.ru/index.php?showtopic=14159, http://rusplt.ru/fact/facts_8512.html, https://pravoslavie.fm/science/uchyonye-k-2050-godu-evropa-mozhet-stat-celi/. Այս հարցի առնչությամբ նկատենք, որ երբեմն գեղարվեստական երևակայությունը նկատելիորեն առաջ է անցնում փորձագետների գիտականորեն հիմնավորված կանխատեսումներից, և նման երևույթի օրինակ է հանդիսանում *Ելենա Չուդինովայի* «Փարիզի Աստվածամոր մզկիթը» (Մ., Յաուզա, Էքսմո, Լեպտա-Պրես, 2005) հիանալի ստեղծագործությունը:

մադրությունը, իր քաղաքական գիծն է իրականացնում[4]: Ի թիվս այս ամենի, Թրամփն իր քաղաքականության մեջ տոտալիտար-լիբերալ ռեժիմից հեռանում է դեպի կառավարման ավելի ավտորիտար ձևը[5]: Կարելի է փաստել, որ անգլոսաքսոնական հանրությունն ընդհանուր առմամբ հերթական անգամ բավական ընկալունակ է դարձել աշխարհում ի հայտ եկած նոր մարտահրավերների և միտումների հանդեպ:

Սրա հետ մեկտեղ, մայրցամաքային եվրոպացիների շրջանում աճել է թերահավատությունն անգլոսաքսերի և, մասնավորապես, ԱՄՆ վարած գլոբալ ռազմավարության նկատմամբ: Չէ՞ որ Մերձավոր Արևելքում[6] այսպես կոչված «կառավարելի քաոսի» ստեղծման հետևանքով է, որ ԵՄ-ում առաջ եկավ միգրացիոն խնդիրը, որը Եվրոպայում (որտեղ առայժմ գերիշխում են ուլտրալիբերալ դոգմաները) առաջ բերեց դիմակայություն տարբեր կողմնորոշումներ ունեցող քաղաքական և հասարակական ուժերի միջև: Իսկ այդ նույն ամերիկացիների կողմից Ուկրաինայի վերածումը «սև խոռոչի», ի թիվս այլ գործոնների, հետապնդում էր նաև ԵՄ-ի և Ռուսաստանի միջև հավելյալ պատնեշ ձևավորելու ոչ այնքան քողարկված նպատակ: Այսօր այս բոլոր զարգացումներն ուղեկցվում են ԱՄՆ-ի կողմից հնչող կշտամբանքներով՝ ՆԱՏՕ-ում եվրոպացիների ֆինանսական համեստ մուծումների առումով և խորանում են Ռուսաստանի դեմ տնտեսական պատժամիջոցների քաղաքականությամբ, որոնք բումերանգի պես հարվածում են նաև եվրոպացիների շահերին: Հայտնի է նաև, որ պատժամիջոցներով տարված ամերիկացիներն այսօր առևտրային պատերազմ են սկսել եվրոպացիների հետ՝ զգալիորեն բարձրացնելով ԵՄ-ից մատակարարվող պողպատի և ալյումինիումի հարկերը:

---

[4] Տե՛ս, օրինակ, *Barry R. Posen,* The Rise of Illiberal Hegemony (Trump's Surprising Grand Strategy). https://www.foreignaffairs.com/articles/2018-02-13/rise-illiberal-hegemony.

[5] Գուցե այստեղ տեղին է զուգահեռներ անցկացնել ներկայիս ամերիկյան նախագահի և խորհրդային առաջնորդ *Ն.Ս. Խրուշչովի* միջև, որը ժամանակին վերակառուցեց տոտալիտար ստալինյան ռեժիմը՝ այն վերածելով ավտորիտարի: Հետաքրքիր է, որ այս քաղաքական գործիչների հոգեբանական կերտվածքում ևս, թերևս, որոշակի նմանություն կա, ինչը թույլ է տալիս որոշ վերլուծաբանների ԱՄՆ նախագահին անվանել *Նիկիտա Սերգեևիչ Թրամփ*:

[6] *Арутюнян Г.,* Мультиполярные реалии, Ближний Восток и геноцид в режиме «бегущей строки», http://noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=12307&sphrase_id=47943.

Բնականաբար, այս բոլոր գործողությունները չեն առաջացնում եվրոպական ընտրանու ներկայացուցիչների հիացմունքը: Չէ՞ որ դեռևս 2003թ. նրանք դժգոհություն էին հայտնում ԱՄՆ իրաքյան քաղաքականությունից, ինչը հիմք էր տվել պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսին հրապարակավ խոստանալ «պատժել Ֆրանսիային և անտեսել Գերմանիային...»: Սակայն դժգոհության նման դրսևորումներն անցյալում իրական քաղաքական ուրվագծեր չէին ստանում: Իսկ այսօր, թերևս առաջին անգամ դը Գոլի ժամանակներից ի վեր, ի հայտ են եկել ոչ թե թույլ ընդվզումներ, այլ միանգամայն իրական տարաձայնություններ եվրոպացիների ու անգլոսաքսոնական հանրության միջև: Այդ տարակարծությունն անթաքույց ձևով դրսևորվում է, օրինակ, Իրանի նկատմամբ քաղաքականությունում և մի փոքր ավելի «պոլիտկոռեկտ» ձևով՝ մի ամբողջ շարք այլ հարցերում: Այլ խոսքերով՝ արևմտյան հանրությունն արդեն բոլորովին էլ միահամուռ չէ, ինչպես նախկինում էր, և քաղաքական-տնտեսական անտագոնիզմը նրա առանձին հատվածների միջև ձեռք է բերում միանգամայն շոշափելի բնույթ: Այս համատեքստում հարկ է նաև հաշվի առնել, որ բուն Եվրոպայում հասունանում են անջատողական տրամադրություններ (Կատալոնիա, Կորսիկա և անգամ Իտալիայի մարզերը): Տեղի է ունենում նաև սահմանազատում Արևմտյան և Արևելյան Եվրոպայի երկրների միջև: Ուստի, զարմանալի չէ, որ գերմանացի ռազմական փորձագետներն այսօր լրջորեն դիտարկում են ԵՄ փլուզման տարբեր սցենարներ, որոնցից մի քանիսն անգամ փոքր-ինչ աղետալի են թվում[7]: Այս բոլոր միտումներն իրենց ամբողջության մեջ թույլ են տալիս ենթադրել, որ ֆրագմենտացման «մինչվեստֆալյան» ախտանիշի դրսևորումները չեն շրջանցել Եվրոպան և, ինչպես ժամանակին ասում էր համակարգերի փլուզման գծով խոշոր մասնագետ պրն Գորբաչովը, այդ «գործընթացն սկսվել է» (*процесс пошел*) ...

Միևնույն ժամանակ, նշենք, որ վերը բերված փաստերը և նկատառումները մատնանշում են լոկ որոշ միտումներ, որոնք ոչ մի կերպ չի կարելի ընկալել որպես ՆԱՏՕ անդամների (որոնց ընդհանուր ռազմական

[7] Տե՛ս, օրինակ, *С.Дебрер*, Бундесвер: Евросоюз — не жилец, США идут к упадку, https://svpressa.ru/politic/article/185646/.

ծախսերը կազմում են համաշխարհային ծավալի մոտավորապես 70%-ը) միջև դաշնակցային հարաբերությունների որակական վատթարացում: Նշենք, որ առայժմ վաղ է ՆԱՏՕ-ն դիտարկել որպես մի ինչ-որ վերազգային կազմակերպություն, և շատ եվրոպացիներ դաշինքն ընկալում են որպես իրենց անվտանգության երաշխավոր: Այս համատեքստում օգտակար է դիմել 2016թ. «Տարվա վերջը» (*End of the Year*)[8] նախագծի շրջանակներում *Gallup International*-ի անցկացրած հարցման արդյունքներին, որի ընթացքում աշխարհի տարբեր երկրներում հարցման ենթարկվածներին տրվել է հետևյալ հարցը. «Ամենամեծ ռազմական պոտենցիալ ունեցող վեց երկրներից՝ ԱՄՆ, Չինաստան, Ռուսաստան, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Հնդկաստան, ո՞րը կնախընտրեիք որպես դաշնակից Ձեր երկիր ռազմական ներխուժման պարագայում»: Ինչպես հետևում է ստացված արդյունքներից, 22 երկրներում հարցման ենթարկվածների 20%-ը նախընտրել է ԱՄՆ-ը, և այդ երկրներից 9-ը ՆԱՏՕ անդամ է (ավելի մանրամասն տե՛ս նաև [1]):

Միևնույն ժամանակ, ֆրագմենտացման գործընթացն ընդգրկել է նաև այլ հանրություններ և տարածաշրջաններ, և այս հարցերին մենք դեռ կանդրադառնանք:

Գրականություն

1. *Арутюнян Г., Марджанян А.,* Духовно-технологические ресурсы и вопросы союзничества в гибридных войнах // 21-й Век, 4 (45), 2017.

[8] http://gallup-international.bg/en/Publications/2015/254-WIN-Gallup-International%E2%80%99s-annual-global-End-of-Year-survey-reveals-a-world-of-conflicting-hopes,-happiness-and-despair

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՍՄԻԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԵՏԱԽՈՒԶԱ-ՀԵՌԱԶՆՆՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ[1]

Արա Հ. Մարջանյան*

Ադրբեջանի կոսմիկական ծրագրի 2-րդ՝ հետախուզության և հեռազննման բաղադրիչում հիմնարար դերակատարում ունի ֆրանսիական «*Airbus Defense and Space*» (*Airbus DS*) ընկերության հետ, հավանաբար, դեռ 2010-ից հաստատված ռազմավարական համագործակցությունը: Այս ընկերությունում է պատրաստվել «*Spot* 7» հետախուզա-հեռազննման արբանյակը, որը 2014-ին վաճառվեց Ադրբեջանին՝ «*Azersky*» անվանմամբ [1]: Ֆրանսիայի հետ հետախուզա-հեռազննման արբանյակներով Ադրբեջանի ռազմավարական համագործակցությունը ներառում է նաև «*Spot 6/Spot 7*» արբանյակային զույգից, ինչպես նաև, հավանաբար, «*Spot 6, 7*/«*Pleiades 1a, 1b*» քառարբանյակ համաստեղությունից օգտվելու հնարավորությունը: Ուշագրավ է, որ *eoPortal* և *Airbus DS* պաշտոնական կայքերի «*Spot 6/Spot 7*» արբանյակներին նվիրված հատվածում կարելի է տեսնել Բաքու քաղաքի և Ապշերոնի թերակղզու կոսմիկական լուսանկարը: Ըստ բնագրի, այն կատարված է 2006թ. ապրիլին (*Նկ. 1):*

Սակայն «*Spot 7/Azersky*» արբանյակն արձակվել է 2014թ. հունիսի 30-ին, իսկ «*Spot 6*»-ը՝ 2012թ. սեպտեմբերի 9-ին: Հետևաբար, այս լուսանկարը չէր կարող կատարվել 2006թ. ապրիլին՝ «*Spot 7/Azersky*» արբանյակի արձակումից 8 տարի առաջ: Բնական է ենթադրել, որ այն կատարվել է ավելի ուշ՝ առնվազն 2012-ից հետո: Առավել ևս, որ լուսանկարի ամսաթվի մակնիշավորումը դիտավորյալ «լղոզված» է, թեև իրական ամսաթիվը, այնուամենայնիվ, մնում է ընթեռնելի՝ 2016թ. ապրիլ (տե՛ս *Նկ. 1*՝ լուսամուտում): Եվ իրոք, համաձայն բաց աղբյուրներում բերվող տեղեկատվության, 2016թ. մարտին տեղի ունե-

[1] Սկիզբը՝ նախորդ համարում [1]:

* «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, առաջատար վերլուծաբան, տ.գ.թ., ա.գ.ա.:

ցավ ֆրանսիական «*Airbus DS*» ընկերության պաշտոնական գրանցումն Ադրբեջանի պետական հարկերի նախարարությունում, իսկ 2016թ. ապրիլին Բաքվում կայացավ ընկերության շնորհանդեսը, որի ժամանակ հավանաբար և ներկայացվել է լուսանկարը[2]: Կարելի է ենթադրել, որ ամսաթվի և տեքստի այս աղավաղումները նպատակ ունեին ցրելու մասնագիտական հանրության ուշադրությունը 2016թ. ապրիլի թեժ ժամանակահատվածից:

Այս առնչությամբ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ ըստ բաց աղբյուրների տեղեկատվության, 2015թ. հունվար-մայիս ժամանակահատվածում «*Spot 7/Azersky*» արբանյակի կողմից իրականացվել է Արաքս գետի ձախափնյա հատվածի հատուկ լուսանկարում՝ Խուդաֆերինի ՀԷԿ-ից մինչև Հորադիզ ընկած տիրույթում[3]: Ըստ աղբյուրի, լուսանկարումն իրականացված էր «հրդեհների մոնիթորինգի» համար (տե՛ս *Նկ. 2*): Բայց հրդեհավտանգության գնահատման և հրդեհների օջախների ծավալման արբանյակային մոնիթորինգը սովորաբար իրականացվում է չոր և շոգ սեզոնին՝ մայիս-օգոստոսին: Հունվար-մայիս ժամանակահատվածում դրա իրականացումը զուրկ է որևէ մասնագիտական հիմնավորումից: Այս առումով հատկանշական է, որ *Նկ. 2*-ում բերվող արբանյակային լուսանկարը համացանցում հայտնվել է միայն 2015թ. հունիսի վերջին, թեև հարակից տեքստից հետևում է, որ «մոնիթորինգն» իրականացվել էր 2015թ. հունվար-մայիս ժամանակահատվածում:

Բացի այդ, Ադրբեջանի տարածքում առկա են շատ ավելի հրդեհավտանգ տարածքներ՝ պատված ավելի խիտ ու չոր բուսա- և անտառածածկով, քան նշված հատվածի գրեթե անտառազուրկ ռելիեֆը: Այնպես որ, հարցեր է առաջացնում ոչ միայն հիշյալ մոնիթորինգի անցկացման ժամանակահատվածը, այլև տարածքը, որը գտնվում էր «*Spot 7/Azersky*» արբանյակի ուշադրության կենտրոնում 2015թ. մարտ-ապրիլին: Տեղի ունեցածն ընկալվում է միանգամայն այլ կերպ, եթե հիշենք, որ մեկ տարի անց հենց այս տարածքում և հենց այս սեզոնին (2016թ. ապրիլի 2-6) ծավալվեցին Ադրբեջանի «քառօրյա» ագրեսիայի ամենաակտիվ գործողությունները [2]:

[2] http://vestikavkaza.ru/news/V-Baku-otkrylos-predstavitelstvo-frantsuzskoy-Airbus-Defence-Space.html

[3] http://vestikavkaza.ru/amp/133584

Նկար 1

Բաքու քաղաքի «Azersky» արբանյակից ստացված լուսանկարը: Բերվում է նաև լուսանկարի անգլերեն բնագիր վերտառությունը



Figure 14: Azersky satellite image of Baku, acquired in April 2006. Baku is the capital and largest city of Azerbaijan with more than 2.2 million inhabitants, located on the southern side of the Absheron Peninsula on the Caspian Sea (image credit: "Azercosmos", owner and operator of "Azersky" satellite)
Աղբյուրը՝ https://directory.eoportal.org/web/eoportal/satellite-missions/s/spot-6-7

Այս առնչությամբ նշենք նաև, որ 2015թ. նոյեմբերին Թուրքիայի կոսմիկական տեխնոլոգիաների գիտահետազոտական ինստիտուտի (*TÜBİTAK UZAY*), «Ազերկոսմոս» ԲԲԸ և Ադրբեջանի նախագահին կից գործող Գիտության օժանդակման ֆոնդի միջև ստորագրվեց համագործակցության պայմանագիր «տիեզերքի, աստղագիտության և Երկրագնդի մակերևույթի հետազննության» ուսումնասիրությունների նպատակով: Ընդ որում, ակնկալվում էր, որ «Ադրբեջանի ցածրաուղեծրային արբանյակի[4] օգտագործումը

[4] Խոսքը «*Azersky*» արբանյակի մասին է:

հնարավորություն կտա համատեղ ծրագրեր իրականացնել նաև գյուղատնտեսությունում»[5]: Ավելի վաղ (2012թ. դեկտեմբեր) բաց աղբյուրներում հիշատակվում էր «*Spot 6/Spot 7*» արբանյակային զույգից Թուրքիայի օգտվելու փաստը, օրինակ՝ *Astrium Services*[6] ընկերության և Ստամբուլի տեխնիկական համալսարանի (*ITU*) միջև 2012թ. հոկտեմբերի 19-ին կնքված երկու համաձայնագրերի շրջանակներում, որոնք «կնպաստեն Թուրքիայի տարածքում մեծ մակերևույթով և բարձր լուծումով լուսանկարումներ իրականացնելուն, մասնավորապես գյուղատնտեսության շահերի համար»[7]:

Նկար 2

Спутник «Azersky» зафиксировал пожары на оккупированных территориях», 29 հունիսի, 2015թ.: Լուսանկարի գունավորումն աղավաղված է աղբյուրում, մակնիշավորումը ըստ աղբյուրի



Աղբյուրը՝ http://vestikavkaza.ru/amp/133584

[5] http://vestikavkaza.ru/news/Azerbaydzhan-i-Turtsiya-dogovorilis-sotrudnichat-po-kosmicheskim-sputnikam.html

[6] *Spot 6* և *Spot 7* արբանյակների մշակող ընկերությունը: Ներկայում *Airbus DS* ընկերության կազմում է:

[7] http://www.intelligence-airbusds.com/en/4582-spot-6-7-turkey-steps-up-collaboration-with-astrium-services

Հիշատակման արժանի է նաև այն հանգամանքը, որ նույն 2015-ին հայտարարվեց Ղազախստանի «ԿազԿոսմոս» ընկերության մտադրությունը[8]՝ օգտվել «*Spot 7/Azersky*» արբանյակի հնարավորություններից՝ «սեփական արբանյակային խմբավորման հնարավորությունների ընդլայնման համար»: Ըստ այս նույն հաղորդագրության, «չի բացառվում նաև, որ Ղազախստանը հետաքրքրված լինի նաև Ադրբեջանի 2-րդ հետախուզա-հեռազննման արբանյակի հնարավորություններով, որը նախատեսվում է արձակել 2017-ին»[9]: Ներկայում Ղազախստանի հետախուզա-հեռազննման արբանյակային խմբավորման կազմում են «*KazEOSat-1*» բարձր լուծումով արբանյակը՝ պատրաստված ֆրանսիական «*Astrium Services*» ընկերության կողմից (լուծումը նադիրում՝ 1մ)[10], ինչպես նաև «*KazEOSat-2*» միջին դասի մինի-արբանյակը՝ մշակված ու պատրաստված բրիտանական «*SSTL*» և նույն՝ ֆրանսիական «*Astrium Services*» ընկերությունների կողմից (տարածական լուծումը՝ 6.5 մ)[11]:

Միևնույն կամ տեխնոլոգիական շատ ասպեկտներով համընկնող կոսմիկական հետախուզա-հեռազննման ծրագրերի իրականացումը Թուրքիայում, Ադրբեջանում և Ղազախստանում հիմք է տալիս ենթադրելու այս երկրների միջև որոշակի համագործակցության պլատֆորմի առկայության մասին՝ թյուրքախոս երկրների միջև միջուկային տեխնոլոգիաների կամ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում համանման համակարգող ծրագրերի օրինակով: Բացի այդ, հիշատակվում են Թուրքիայում սեփական արբանյակային ծրագրի առկայությունը և սեփական կոսմոդրոմ ու հրթիռային կրիչներ ունենալու Թուրքիայի մտադրությունը:

Ադրբեջանի համագործակցությունը կոսմիկական ոլորտում, բացի Ֆրանսիայից, փաստված է նաև «չմիացած երկրների» խմբի առաջատարներ Հնդկաստանի և Մալայզիայի հետ[12]:

[8] http://vestikavkaza.ru/news/Kazkosmos-planiruet-vospolzovatsya-azerbaydzhanskim-sputnikom.html

[9] Արձակումը առ այսօր իրականացված չէ:

[10] Արձակված է 2014թ. ապրիլին ֆրանսիական «Կուռու» կոսմոդրոմից, ֆրանսիական *Arianespace* ընկերության *Vega* թեթև դասի հրթիռային կրիչով:

[11] Արձակված է 2014թ. նոյեմբերին 19-ին ՌԴ «Դոմբարովսկայա» բալիստիկ հրթիռային բազայի «Ясный» կոսմոդրոմից, «Դնեպր-1» հրթիռային կրիչով:

[12] 2017թ. հոկտեմբերի 4-ին հայտարարվեց Պակիստանի կոսմիկական գործակալության (*SUPARCO*) մտադրության մասին՝ 2018թ. մարտին արձակել այս երկրի առաջին լիարժեք հետախուզա-հեռազննման *Pakistan Remote Sensing Satellite 1 (PRSS-1)* արբանյակը: Նշվում էր, որ այս արձակումը «կփոխի ողջ Միջին Արևելքի տարածաշրջանի աշխարհաքաղաքականությունը»:

Նկար 3

Ադրբեջանի արբանյակային ղեկավարման հիմնական կենտրոնը (ԱՂՀԿ)

Ամենայն հավանականությամբ, ակտիվ է նաև կոսմիկական և արբանյակային ոլորտում Իսրայելի հետ Ադրբեջանի համագործակցությունը: Մասնավորապես, Նախիջևանում տեղակայված Ադրբեջանի Արբանյակային ղեկավարման պահեստային կենտրոնի (ԱՂՊԿ) վերգետնյա անտենային տնտեսության ստեղծման գործում հավանական է իսրայելական *ORBIT Communication Systems Ltd* ընկերության ներգրավվածությունն՝ իր «*Gaia*» արբանյակային անտենաների ընտանիքով և ցածրաուղեծիր հետախուզա-հեռազննման արբանյակների տվյալների մշակման համակարգչային ծրագրերով [1]: Բացառված չէ նաև «*Gaia*» արբանյակային անտենաների օգտագործումն Ադրբեջանի Արբանյակային ղեկավարման հիմնական

կենտրոնում (ԱՂՀԿ) (տե՛ս *Նկ. 3*): Առավել ևս, որ ԱՂՊԿ լուսանկարներից հետևում է կենտրոնի տարածքում առկա ոչ միայն գեոստացիոնար, այլև ցածր ուղեծրային հետախուզա-հեռազննման արբանյակային կայանքների առկայությունը (տե՛ս *Նկ. 3*, վերևում՝ աջից): Համենայնդեպս, փաստված է ԱՂՊԿ հեռահաղորդակցական անտենային տնտեսության հիմնական կապալառու՝ իսպանական «*GMV*» ընկերության համագործակցությունը *ORBIT Communication Systems Ltd* ընկերության հետ, ինչպես նաև վերջինիս համագործակցությունը հիշատակված *Astrium Services*»/*Airbus DS*, *Orbital Sciences* և *Space Systems/Loral* ընկերությունների հետ:

Հետախուզա-հեռազննման բաղադրիչով Ադրբեջանում կոսմիկական ծրագրերի իրականացումն օգտվում է երկակի նշանակության այս տեխնոլոգիական դաշտում ներկայում գոյացած «գորշ շուկայի» հնարավորություններից: Արբանյակային տեխնոլոգիաների փոխանցման հետ կապված, թերևս միակ, այն էլ՝ անուղղակի դեպքը, հավանաբար, հանդիսանում է Ադրբեջանի 2-րդ հեռահաղորդակցական արբանյակի պատրաստման համար ԱՄՆ *ExIm* բանկին ԱՄՆ *«Orbital Sciences»* ընկերության համար վարկային միջոցներ տրամադրելու՝ Կոնգրեսի արգելափակումը 2015-ին [1]: Սակայն այս արգելանքը Ադրբեջանը հաղթահարեց արբանյակի պատրաստման համար ամերիկա-կանադական *«Space Systems/Loral»* ընկերությանը ներգրավելու միջոցով:

Այս առնչությամբ նշենք, որ *«Space Systems/Loral»* ընկերությունը հանդիսանում է ԱՄՆ-ում գործող երկակի նշանակության արբանյակային տեխնոլոգիաների փոխանցումը կարգավորող *ITAR*[13] ռեժիմով պատժված (1996թ.) միակ ընկերությունը: Այս ռեժիմը ԱՄՆ-ում (և միակն աշխարհում) գործում էր 1996-2012թթ.: 2013թ. ԱՄՆ նախագահ Բ.Օբամայի հրամանագրով արբանյակային տեխնոլոգիաները հանվեցին *ITAR* արգելման ցուցակներից[14]: Հետախուզա-հեռազննման նշանակության արբանյակների և արբանյակային տեխնոլոգիաների փոխանցման ուղղությամբ ներկայում միջազգային կարգավորում չկա:

[13] *International Traffic in Arms Regulations*. Պաշտպանական և ռազմական առնչության տեխնոլոգիաների կարգավորման և սահմանափակման ԱՄՆ ազգային օրենսդրություն:
[14] Obama signs law easing satellite export controls. *Spaceflight Now*. 4 January 2013.

Գրականություն

1. *Մարջանյան Ա.Հ.*, Ադրբեջանի տիեզերական տեխնոլոգիական սեգմենտը, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 1 (90), 2018: http://noravank.am/upload/pdf/Ara_Marjanyan_Globus_01_2018.pdf
2. *Цель войны и цель операции*. Интервью с председателем НПО "Е-куб" Ара Марджаняном. «Голос Армении», 2016-04-04: http://www.golosarmenii.am/article/39205/cel-vojny-i-cel-operacii.

ԻՆՏԵՐՆԵՏԸ
ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (2012-2016ԹԹ.)

Սամվել Մանուկյան[*]

Խնդիրը. Ինտերնետն աստիճանաբար վերածվում է հասարակության լայն շերտերի աշխարհայացքի ձևավորման և վարքագիծը պայմանավորող նշանակալի գործոնի: Վերջին տասնամյակում վերլուծական հանրությունը հակված է ինտերնետը դիտել որպես գործիք, որն ունակ է երկրներում առաջացնել հասարակական-քաղաքական ցնցումներ, ինչպես նաև վճռական դերակատարում ունենալ քաղաքական ընտրություններում: Այդ տեսակետից կարևոր է ընդհանուր պատկերացում ունենալ վերջին տարիներին Հայաստանում ինտերնետի նշանակության աճի միտումների և արդի վիճակի մասին: Մասնավորապես, կարևոր է գնահատել ինտերնետի մոբիլիզացիոն պոտենցիալը: Հոդվածում ներկայացված են այդ հարցերը լուսաբանող վերլուծական տվյալներ:

Տվյալների աղբյուրները. Ներկայացված արդյունքները ստացվել են «Կյանքի որակը Հայաստանում 2012-2016թթ.» ՀՀ կառավարության պատվերով իրականացված զանգվածային սոցիոլոգիական հետազոտությունների շարքի տվյալների շտեմարանների վերլուծությամբ: Բոլոր տվյալները վերաբերում են Հայաստանի 18 և ավելի տարեկան ամբողջ բնակչությանը:

Արդյունքները. 2012-2016թթ. ընթացքում ինտերնետից օգտվողների քանակը Հայաստանում աճել է 62%-ից մինչև 78% (*Գծապատկեր 1*): Նշենք, որ անձն ինտերնետից կարող է օգտվել ինչպես տանը, այնպես էլ այլ տեղերում, օրինակ՝ աշխատավայրում:

[*] «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ, սոց.գ.թ.:

Գծապատկեր 1



2016թ. ինտերնետ ուներ Հայաստանի բնակչության 76%-ը, այսինքն՝ տանն ինտերնետ չունեցող, սակայն ինտերնետից օգտվողները կազմում են ընդամենը 2%: Տանն ինտերնետի առկայությունը նշանակալիորեն կախված է բնակավայրի տիպից (Երևանում 2016թ. տանն ինտերնետ ուներ բնակչության 83%-ը, իսկ գյուղերում՝ 69%-ը), բարեկեցությունից (եթե անձը պատկանում է Հայաստանի բնակչության առավել բարեկեցիկ մեկ երրորդ հատվածը կազմող շերտին, ապա տանն ինտերնետ ունենալու հավանականությունը 0.95 է, իսկ բարեկեցության ամենացածր մեկ երրորդ հատվածում գտնվելու դեպքում՝ 0.63), կրթամակարդակից (տանն ինտերնետ ունենալու հավանականությունը բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում 0.89 է, իսկ միջնակարգ կամ ավելի ցածր կրթության դեպքում՝ 0.70) և տարիքից (եթե ընտանիքում կա 18-29 տարեկան անձ, ապա տանն ինտերնետ ունենալու հավանականությունը 0.87 է, իսկ 60+ տարիքի անդամի առկայության դեպքում՝ 0.60):

2012-2016թթ. ընթացքում նշանակալիորեն աճել է ինտերնետը որպես ինֆորմացիայի 1-ին կամ 2-րդ կարևոր աղբյուր համարող անձանց քանակը՝ 33%-ից մինչև 59%: Ընդ որում, 18-24 տարեկանների խմբում այդ ցուցանիշը 90%-է, իսկ 25-29 տարեկանների խմբում՝ 76%: Համեմատության համար նշենք, որ հեռուստատեսությունը որպես ինֆորմացիայի 1-ին կամ 2-րդ աղբյուր նշած անձանց քանակը դիտարկվող ժամանակահատվածում ըստ էության չի փոխվել և 2016թ. կազմել է 18 և ավելի տարեկանների 85%-ը:

Գծապատկեր 2



Հայաստանում 2015թ. *ինտերնետին միանալու առավել տարածված սարքերն* էին կաբելային միացումը, որն առկա էր հարցվածներից 47%-ի տանը, և *WiFi*-ը՝ 43%: Հեռախոսով միանում էր ինտերնետին բնակչության 30%-ը, ընդ որում՝ 18-29 տարեկանների 54%-ը, իսկ 30-45 տարեկանների՝ 32%-ը:

2016թ. *ինտերնետի օգտագործման առավել տարածված նպատակներն* էին՝ հետաքրքիր նյութերի և նորությունների ստացումը (66%), երաժշտություն լսելը (61%), շփումն արտասահմանում բնակվող հարազատների հետ (61%), շփումն ընկերների հետ (54%): Առցանց գնումներ էր կատարում բնակչության 9%-ը, իսկ խաղադրույք էր կատարում 2%-ը:

2014-2016թթ. *որևէ սոցիալական ցանցից օգտվողների քանակը* աճել է 11%-ով՝ 42%-ից հասնելով 53%-ի: Այդ ցուցանիշը հատկապես բարձր է 18-29 տարեկանների շրջանում՝ 85%, իսկ 30-45 տարեկանների շրջանում՝ 62%:

2014-2016թթ. առավել ինտենսիվ աճ է գրանցվել *Facebook*-ից օգտվողների քանակի մեջ՝ հասնելով 39%-ի (*Գծապատկեր 3*): Այն Հայաստանում ամենատարածված սոցիալական ցանցն է: Իր տարածվածությամբ երկրորդն է *Одноклассники* ցանցը, որից օգտվում է բնակչության 33%-ը:

Գծապատկեր 3



2016թ. *ամեն օր որևէ սոցիալական ցանցից օգտվում էր* Հայաստանի բնակչության 41%-ը, ընդ որում՝ *18-29 տարեկանների* խմբում նրանք կազմել են 72%, *Երևանում*՝ 50%, *բարձրագույն կրթություն* ունեցողների շրջանում՝ 55%, *բարեկեցության ամենաբարձր մեկ երրորդ հատվածում*՝ 62%: Ցուցանիշի արժեքները տղամարդկանց և կանանց շրջանում վիճակագրորեն չեն տարբերվում:

Առկա տվյալները թույլ են տալիս գնահատել *սոցիալական ցանցերի ընդհանուր և մասնակի մոբիլիզացիոն պոտենցիալները*: Սոցիալական ցանցի մոբիլիզացիոն պոտենցիալը, տվյալ դեպքում, նշանակում է այն անձանց քանակը, որոնց հետ կարող են հաղորդակցություն հաստատել տվյալ ցանցում մեկ օրվա ընթացքում:

Աղյուսակ 1-ում ներկայացված են բոլոր և առավել տարածված (*Facebook, Одноклассники, Вконтакте*) ցանցերի 1 օրվա ընթացքում մոբիլիզացիոն պոտենցիալի բացարձակ արժեքների գնահատականները Երևանում՝ 18-29 և 30-45 տարեկանների շրջանում: Հայտնի է, որ *դրանք հասարակական առավել ակտիվ շերտերն են*:

Երևանում *18-45 տարեկանների շրջանում սոցիալական ցանցերի 1 օրվա առավելագույն մոբիլիզացիոն պոտենցիալի գնահատականը բացարձակ թվերով կազմում է 250,708 մարդ*: Ընդ որում, *Facebook*-ի նույն ցուցանիշը 200,444 է, որոնցից՝ 118,649-ը՝ 18-29 տարեկաններն են, իսկ 81,795-ը՝ 30-45 տարեկանները: *Одноклассники* ցանցի նույն ցուցանիշները մոտ երկու անգամ զիջում են *Facebook*-ին և համապատասխանաբար կազմում են՝ 105,443, 52,517 և 52,926 մարդ:

Սոցիալական ցանցերի մոբիլիզացիոն պոտենցիալների գնահատականները հնարավոր է ճշգրտել ՝կիրառելով մարդկանց քաղաքական հայացքների, քաղաքական վարքի և մոբիլիզացիոն թեմաների վերաբերյալ տվյալները, ինչպես նաև էլ ավելի մասնավորեցնելով սոցիալ-ժողովրդագրական խմբերը:

Աղյուսակ 1

Սոցիալական ցանցերի մեկ օրվա մոբիլիզացիոն առավելագույն պոտենցիալի բացարձակ արժեքների գնահատականները (անձանց քանակ) Երևանում՝ 18-29 և 35-45 տարեկան բնակչության շրջանում: Բոլոր ցանցերը ներառում են՝ Facebook, Одноклассники, Вконтакте, LinkdIn, Twitter և Google+

Տարիքային խմբեր	**Սոցիալական ցանցեր**			**Բոլոր ցանցերը**
	Facebook	Одноклассники	Вконтакте	
18-29	118,649	52,517	23,341	140,045
30-45	81,795	52,926	4,811	110,664
Ընդամենը	200,444	105,443	28,152	250,708

Եզրակացություններ. Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում ինտերնետը և սոցիալական ցանցերն արդեն ունեն հասարակական ազդեցության շատ բարձր ներուժ: Այդ ներուժը կարող է օգտագործվել ինչպես կոնստրուկտիվ, այնպես էլ դեստրուկտիվ նպատակներով:

Երևանում *ակտիվ սոցիալական խմբերում սոցիալական ցանցերի մոբիլիզացիոն պոտենցիալների գնահատականները վկայում են, որ Հայաստանում ինտերնետի և սոցիալական ցանցերի բովանդակությունը և գործունեությունը կրիտիկական ոլորտներ*[1] *են,* որոնց ապակառուցողական կիրառությունները լուրջ վտանգներ են պարունակում հասարակական կայունության պահպանման տեսակետից:

Հետևաբար, խիստ արդիական է *այդ կրիտիկական ոլորտների պաշտպանությանն ուղղված գիտականորեն հիմնավորված ռազմավարությունների մշակումը:*

[1] *Կրիտիկական* են կոչվում այն ռեսուրսները, կառույցները և ոլորտները, որոնք որոշիչ նշանակություն ունեն ազգային անվտանգության համար և որոնց գործունեության խաթարումը կարող է հանգեցնել համակարգային բնույթի ծանր հետևանքների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՀԱՔԵՐԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սամվել Մարտիրոսյան*

Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև Սփյուռքի հայության դեմ բավական ակտիվ գործում են ադրբեջանական և թուրքական մի շարք հաքերային խմբավորումներ[1]: Մյուս կողմից՝ Հայաստանը թիրախավորում են այլ հաքերային խմբավորումներ, որոնք, ենթադրաբար, հովանավորվում կամ անմիջապես կառավարվում են տարբեր պետությունների հատուկ ծառայությունների կողմից:

Այսպես, Էդվարդ Սնոուդենի բացահայտումներից ելնելով՝ տեսնում ենք, որ Հայաստանի հանդեպ հետաքրքրությունը ԱՄՆ հատուկ ծառայությունների կողմից միջինից բարձր է: *NSA* բացահայտված համակարգերից մեկը, որը կոչվում է *Boundless Informant,* թույլ է տալիս քարտեզի վրա հետևել, թե որ երկրներից ինչ ակտիվությամբ է կորզվում տեղեկատվությունը ԱՄՆ այս հատուկ ծառայության կողմից էլեկտրոնային լրտեսության («շպիոնաժի») բոլոր հնարավոր միջոցներով: Սնոուդենի տրամադրած պատկերից երևում է, որ 2013թ. մարտի ընթացքում միայն ԱՄՆ տարածքից ստացվել է մոտ 3 միլիարդ տարբեր տիպի տեղեկատվություն: Երկրները ներկայացված են ըստ այդ ամսվա ընթացքում դրանց հանդեպ *NSA* համակարգի ակտիվության, կանաչ գույնը վկայում է ցածր ակտիվության մասին, կարմիրը՝ հակառակը: Տվյալ պատկերի վրա, օրինակ, Հայաստանը դեղին գույնի է՝ մոտավորապես Չինաստանի պես և Ռուսաստանից ավելի ակտիվ, ինչը խոսում է *NSA*-ի միջինից բարձր ակտիվության մասին[2] ինչն,

---

* «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

[1] *Սամվել Մարտիրոսյան*, Ադրբեջանական հաքերները թիրախավորում են հայ օգտատերերին, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15580&sphrase_id=64438

[2] *Սամվել Մարտիրոսյան*, Սնոուդենի բացահայտումները. աշխարհին ամերիկյան և բրիտանական գաղտնալսման տակ, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12421&sphrase_id=64438

իհարկե, կարող է նորմայից բարձր լինել՝ պայմանավորված Հայաստանի ներքին իրավիճակով, որտեղ այդ ժամանակ ընտրություններ էին ընթանում (տե՛ս *Նկար 1*).

Նկար 1

Boundless Informant համակարգի տվյալների քարտեզն ըստ Էդվարդ Սնոուդենի կողմից բացահայտված փաստաթղթերի

Մյուս բացահայտումը նույնպես 2013թ. եղավ, և կրկին զուտ Հայաստանին չէր վերաբերում: Կասպերսկի լաբորատորիայում հայտնաբերեցին սուպերլրտեսական վիրուս, որն անվանվեց *Red October*: Այն ներմուծվում էր պետական և ոչ պետական կարևոր ենթակառուցվածքներ, կատարվում էին լայնածավալ կիբեռլրտեսական գործողություններ՝ գողանալով հնարավոր տիպի ամբողջ կարևոր տեղեկատվությունը, նույնիսկ վերականգնելով արդեն ջնջված ֆայլերը, որոնք կարող էին վիրուսի ստեղծողների համար հետաքրքիր լինել: Պարզվեց, որ ծրագիրը գաղտնի գործել է հինգ տարի և ոչ մի տեղ մինչև 2013թ. չի հայտնաբերվել: Հայաստանն ամենավարակված երկրների տասնյակի ցանկում էր, այստեղ Կասպերսկի լաբորատորիան հայնաբերել էր վարակման տասը դեպք[3]:

Այդպես էլ չհստակեցվեց, թե ով էր կանգնած *Red October*-ի հետևում: Անվտանգության մասնագետներն առնվազն գտել էին ծրագրի

[3] "Red October" Diplomatic Cyber Attacks Investigation, https://securelist.com/red-october-diplomatic-cyber-attacks-investigation/36740/#8

մեջ ռուսական հետքեր, սակայն դրանք կարող էին միտումնավոր թողած լինել կոդի մեջ, որպեսզի շեղեն ուշադրությունը: Ավելին, Ռուսաստանն այս հարձակման հիմնական թիրախն էր (տե՛ս *Նկար 2*): Ավելի հավանական է Չինաստանի հետքը: Օգտագործված տեխնիկաներում կան հատվածներ, որոնք հղում են անում մի շարք ծրագրերի վրա, որոնք օգտագործվել են Տիբեթի ակտիվիստների դեմ, և ենթադրաբար օգտագործվել են Չինաստանի հատուկ ծառայությունների կողմից:

Նկար 2

Red October ծրագրի թիրախներն
ըստ Կասպերսկի լաբորատորիայի



FireEye կազմակերպությունը, որը զբաղվում է տեղեկատվական անվտանգությամբ, 2014թ. *APT28: A WINDOW INTO RUSSIA'S CYBER ESPIONAGE OPERATIONS?* զեկույցում հայտնաբերել էր մի հաքերային խմբի լայնածավալ միջազգային ակտիվություն, որի թիրախներից մեկը

նաև հայաստանյան զինվորականներն էին[4]: Խոսքը *APT28* կամ *Fancy Bear* անվանումը կրող հաքերային խմբի մասին է, որը հիմա արդեն հայտնի է իր գործողություններով, որոնք, հավանաբար, ազդեցություն են ունեցել ԱՄՆ ընտրությունների ժամանակ: Տվյալ խումբը շատ մասնագետների կողմից համարվում է ռուսաստանյան պետական կիբեռխումբ, որը գործում է Կրեմլի շահերից ելնելով: Ըստ *FireEye*-ի ուսումնասիրության, *Fancy Bear* հաքերները ստեղծել էին կեղծ mail.rnil.am ֆիշինգային կայք, որը նմանակում էր Հայաստանի պաշտպանության նախարարության դոմեյնը՝ mil.am, և թույլ էր տալիս ֆիշինգային նամակների միջոցով թիրախավորել հայաստանյան զինվորականներին, նրանց դեմ իրականացնել կիբեռլրտեսական գործողություններ. «*o target members of the Armenian military by hosting a fake login page*»: Թե ինչ վնաս են հասցրել հաքերները Հայաստանին, հայտնի չէ:

2017թ. մայիսին *Citizen Lab* կազմակերպությունը նոր բացահայտումներ արեց *Fancy Bear* հաքերային խմբի նոր գործողությունների մասին: Այս անգամ նույնպես Հայաստանը հայտնվեց զոհերի ցանկում: *TAINTED LEAKS. Disinformation and Phishing With a Russian Nexus* զեկույցից հայտնի է դառնում, որ այս անգամ թիրախ են դարձել Հայաստանի կառավարության և բանակի ներկայացուցիչները[5]: Ըստ կազմակերպության տվյալների, Հայաստանը ֆիշինգային հարձակման հիմնական զոհ երկրներից մեկն էր, մոտ 3% ֆիշինգային հարձակումները բաժին են ընկնում հենց մեր հանրապետությանը: Մեր ունեցած տվյալներով՝ հայաստանյան զոհերի ցանկում կան բարձրաստիճան զինվորականներ, ինչպես նաև դիվանագետներ:

Տարեվերջին հայտնվեց *Associated Press*-ի «*Russia hackers pursued Putin foes, not just US Democrats*» զեկույցը[6], որում կրկին տեսնում ենք արդեն հարազատ դարձած *Fancy Bear* խմբին: Եվ նորից պարզ է դառնում, որ լայնածավալ կիբեռհարձակումների ցանկում, որոնք կատարվել են

[4] APT28: A WINDOW INTO RUSSIA'S CYBER ESPIONAGE OPERATIONS? https://www.fireeye.com/content/dam/fireeye-www/global/en/current-threats/pdfs/rpt-apt28.pdf, TAINTED LEAKS. Disinformation and Phishing With a Russian Nexus, https://citizenlab.ca/2017/05/tainted-leaks-disinformation-phish/

[5] TAINTED LEAKS. Disinformation and Phishing With a Russian Nexus, https://citizenlab.ca/2017/05/tainted-leaks-disinformation-phish/

[6] Russia hackers pursued Putin foes, not just US Democrats, https://www.apnews.com/3bca5267d4544508bb523fa0db462cb2

միանգամից բազմաթիվ պետությունների տարածքում, կան նաև հայաստանցիներ: Ըստ ներկայացված քանակական ցանկի, Հայաստանում եղել է 41 թիրախ (տե՛ս *Նկար 3*).

Նկար 3

Fancy Bear հաքերային խմբի հարձակման թիրախներն ըստ երկրների: Associated Press-ի տվյալներ



Սրանք պետական կիբեռլրտեսության այն մի քանի դեպքերն են, որոնց մասին տեղեկացված ենք: Հաշվի առնելով, թե վերջին տարիներին որքան արհեստավարժ է դարձել պետական հաքինգը, կարելի է եզրակացնել, որ Հայաստանի դեմ իրականացվող կիբեռգործողությունների մի մասը, գուցե՝ զգալի մասը, դեռ բացահայտված չէ: Հասկանալի է նաև, որ Հայաստանը հետաքրքրության թիրախ է գրեթե բոլոր խոշոր կիբեռհետախուզությունների համար:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԶՈՐ ԶԵՆՔԻ ԹԵՐԸՆԿԱԼՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Արմեն Ղալեչյան[*]

Մարդիկ իրենց շրջապատող աշխարհը սկսել են ընկալել ոչ միայն համաձայն իրենց կրթական ցենզի, այլև ավելի հաճախ՝ ինչպես դա նրանց ներկայացնում է «արհեստածին» տեղեկատվական միջավայրը: Աշխարհն այլևս չի ղեկավարվում անցյալի «մնայուն» կանոններով՝ ենթարկվելով շարունակական սկզբունքային փոփոխությունների: Երբ այդ աշխարհում առկա ղեկավարման համակարգերն սկսում են ուշացումով արձագանքել նոր տիպի խնդիրների լուծմանը և աշխարհն այլևս ի վիճակի չէ ապահովել անվտանգության «բավարար» մակարդակը, ապա նա իր «արհեստածին» տեղեկատվական միջավայրի միջոցով սկսում է «վաճառել» սպառնալիքներ, որոնցից հետագայում փորձում է մեզ հերոսաբար «պաշտպանել»: Տեղեկույթը վերածվում է առաջին անհրաժեշտության ապրանքի, և դա է պատճառը, որ բոլոր համաշխարհային նորությունները կառուցված են զայրույթի և վախերի (հավանական պատերազմների վերսկսման) վրա: Այդ պատճառով էլ առաջին պլան է մղվում այդ խնդիրների լուծման այսպես կոչված «արտակարգ գործիքակազմը», որն, ըստ էության, բավական կոշտ է և ագրեսիվ:

Այսօր փոխակերպվում է նաև այդ «արտակարգ գործիքակազմը»՝ ներկայանալով ոչ թե ֆիզիկական, այլ տեղեկատվական տիրույթում: Անցյալում հասարակություններն իրենց գաղափարները հիմնականում զարգացրել են ռացիոնալ մոտեցումներով, որոնց հիմքն են հանդիսացել, օրինակ՝ գիտությունը և մարդկության էվոլյուցիան: Դրան հակառակ՝ ժամանակակից հասարակությունն իր ներկան կառուցում է հույզերով և զվար-

[*] Գնդապետ, ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան Ռազմական համալսարանի մարշալ Հ.Բաղրամյանի անվան հրամանատարաշտաբային ֆակուլտետի Առաջնորդում և կառավարում ամբիոնի ավագ դասախոս:

ճանքներով (օրինակ՝ վեպերին փոխարինող հեռուստասերիալներով[1]) և դրանց տալով նախապատվություն՝ նպաստում է կրիտիկական մտածողության կորստին: Տեղեկատվական պատերազմն իր մոտեցումների մեջ ունի երկու «հենասյուների» վրա հիմնված սկզբունքային տարբեր՝ տեղեկատվատեխնիկական[2] և տեղեկատվահոգեբանական[3] (տեղեկատվահումանիտար) մոդելներ: Առաջինի գործիքակազմը կիբեռգործողություններն են, իսկ երկրորդինը՝ ներազդմանն ուղղված օպերացիաները:

Երկու մոդելների հիմնական նպատակը մարդկանց ղեկավարումն է, բայց տարբեր ձևերով ու մեթոդներով: Այսինքն՝ վերը նշվածից հետևում է, որ մեր ժամանակներում տեղեկատվական պատերազմները դարձել են օրինաչափ երևույթ: Դրանց նպատակն է ներազդել մարդկության համար կարևորագույն բոլոր ոլորտների վրա: Այդ ոլորտներն են՝ քաղաքական, ռազմական, ֆինանսական, տնտեսական, միջազգային հարաբերություններ և այլն: Բանակային ներազդման օպերացիաների օրինակներից են «Փոթորիկ անապատում» գործողության ընթացքում հակառակորդին մոլորության մեջ գցելու նպատակով լայնորեն կիրառվող քողարկման լրակազմերը, այդ թվում սպառազինության և ռազմական տեխնիկայի հիմնական տեսակների և համակարգերի նմանակները: Սաուդյան Արաբիայի և Քուվեյթի սահմանի երկայնքով ծավալվել էին բազմաթիվ կեղծ նշանակետերի համակարգեր: Հիմնականում կիրառվել են զրահատանկային տեխնիկայի ստանդարտ նմանակիչներ, որոնք հնարավորություն ունեին գործնականում ցուցադրելու ապաքողարկիչ հատկություններ բոլոր սահմաններում՝ եռաչափ ստվերապատկեր, շարժիչի ջերմային ճառագայթում և նրա աշխատանքային աղմուկը, զրահատանկային տեխնիկայի կրակոցների նմանակում, կողային ռադիոկայանների պարբերաբար եթեր դուրս գալը և այլն: Նմանակների քանակը համապատասխանեցվել էր Պարսից ծոցում ԱՄՆ խմբավորումների կազմում առկա մարտական տանկերի քանակին:

[1] Տե՛ս *Ա.Մանուկյան, Դ.Գալստյան*, Ինչ են մատուցում լսարանին Հայաստանի հեռուստաալիքները, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» ամսագիր, # 9 (88) 2017, էջ 21: Օրինակ՝ ՀՀ առավել դիտվող հեռուստաալիքներով հեռարձակվող սերիալների ընդհանուր ծավալը կազմում է 64,4%:

[2] Տե՛ս *Ա.Ղալեչյան,* Տեղեկատվական պայքարը ռազմական ոլորտում, «Նորավանք» ԳԿՀ, 2016, էջ 77:

[3] Նույն տեղում, էջ 76:

Վերջին ժամանակներում կատարված բոլոր նշանակալից և քննարկվող իրադարձությունները ստեղծվել են նմանատիպ տեղեկատվական գործիքակազմի օգնությամբ[4]: Այս բոլոր դեպքերում մարդու ինքնուրույնությունը թուլանում է, քանի որ նրան դիմակայում են հզորագույն տեղեկատվական մեխանիզմներ («համակարգեր»)՝ ապահովելով դրանց համար բոլոր պահանջվելիք մեկնաբանությունները: «Տեղեկատվական պատերազմ» նորառաճ տերմինով սկսել ենք բնութագրել ներազդման ամենատարբեր օպերացիաներ, որոնք ուղղված են անհատական և զանգվածային մտածողության վրա: Այսպես՝ սկզբունքորեն դրա կիրառման կապակցող գործիք է պարտադրման մեխանիզմը, որն անցյալում շատ կարևոր էր, օրինակ՝ բացահայտ կրոնական և գաղափարական հարկադրող ազդեցության ժամանակ, ինչը տարիների ընթացքում փաստորեն փոխակերպվեց՝ դառնալով ավելի քողարկված և թաքնված: 2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի դեմ ահաբեկչական հայտնի գործողությունների օրինակը ցույց տվեց, որ դրանց տեղեկատվական հետևանքները ֆիզիկական իրադարձություններից ազդեցիկ էին: Ներկայում դա բնութագրում է Իսլամական պետության ահաբեկիչների (ժամանակակից) գործելակերպը, որը վերոնշյալ իրադարձություններից հետո ընդգծեց իր ուրույն գործիքակազմը: Ահաբեկիչները ստեղծեցին և շարունակում են կատարելագործել զանգվածային գիտակցության վրա ներազդման իրենց գործողությունները: Հետևաբար, այդ վիրտուալ տեղեկատվական հոսանքների հորձանուտն ընկած մարդն այլևս ի վիճակի չէ դրանց ինքնուրույն հակազդելու:

Բանակին վերաբերող մասով կարելի է բերել հետևյալ ուսուցանող օրինակը. մասնավորապես, վերլուծելով Իրաքյան պատերազմի արդյունքները՝ կարելի է հանգել այն եզրակացությանը, որ լավ կոորդինացված տեղեկատվահոգեբանական գործողությունների և օպերացիաների հետևանքները կարող են գերազանցել բուն ռազմական գործողությունների արդյունքները: Իրաքյան բանակի դասալիք կամ գերի հանձնված տասը զինվորից յոթը դիմել է այդ քայլին ամերիկյան տեղեկատվության ազդեցության տակ: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ տեղեկատ-

[4] Օրինակ՝ ԱՄՆ և ՆԱՏՕ անդամ պետությունների ներխուժումը Հարավսլավիա, Իրաք, Լիբիա, Սիրիա և այլն:

վահոգեբանական պայքարը պետք է տարվի օպերատիվ մարտավարական մակարդակների՝ շտաբների, զինվորական ղեկավարման մարմինների համատեղ ջանքերով:

Եթե մարդկությունն անցյալում հենվում էր կրոնի և գաղափարախոսության վրա, ապա այսօր նա տեղեկատվության հետևորդն է, որը նրան ուղղորդում է «դեպի ճիշտ պահվածք»՝ պատրանք ստեղծելով, որ դա նրա սեփական որոշումն է: Սոցիալական մեդիան[5] և հեռուստասերիալները համակարգված ու անտեսանելի կերպով ձևավորում են նրա հույզերը, ինչը հիշեցնում է դպրոցական և բուհական տարիներին գիտելիքի (տեղեկատվության)՝ երբեմն անքննադատ, որպես բացարձակ ճշմարտության ընկալումը: Սոցիալական մեդիան և հեռուստասերիալները դարձել են հույզերի մեքենաներ, որոնք մարդուն ներքաշել են դրա ձևավորման արդյունաբերական գործընթացի մեջ[6]: Նկատենք, որ ֆանտաստիկ թեմաներով հեռուստասերիալների մեծ մասը մեզ նախապատրաստում է սարսափելի ապագայի գալստյանը, այդպես է նաև մուլտֆիլմերում և համակարգչային խաղերում[7], որտեղ մարդը մարդու ոխերիմ թշնամին է: Հույզերի առաջացման անհատական պրոցեսները չեն կարող մրցակցել ինդուստրիալացված, հատուկ համակարգերի կողմից նպատակաուղղված ձևավորված հույզերի հետ, քանի որ անհատականները թույլ են և ոչ հստակ, իսկ ինդուստրիալացվածը՝ հզոր են և հստակ:

Այսօր շատերը մտածում են միանման՝ ոչ այն պատճառով, որ դա է քարոզում կրոնը կամ գաղափարախոսությունը, այլ որ հեռուստաէկրաններից դա են թելադրում հեռուստասերիալները կամ «հանրաճանաչ հեռուստատեսային մեկնաբանները»[8]: Վերահսկելով և ձևավորելով զանգվածային (զանգվածների) գիտակցությունը՝ կարելի է քարոզել «ազա-

[5] Տե՛ս *Ս.Մարտիրոսյան*, Համացանցի և բջջային կապի ներթափանցումը, սոցիալական մեդիաները Հայաստանում (2017թ.), «Նորավանք» ԳԿՀ, «Գլոբուս» ամսագիր, # 9 (88), 2017, էջ 13: Մասնավորապես՝ ՀՀ –ում facebook.com կայքի այցելուների թիվը 2017թ. երրորդ կիսամյակում կազմել է 1 մլն 600 հազար օգտատեր՝ օրական մոտ 690 հազար օգտատեր: Նաև առաջընթաց է գրանցել youtube.com–ը, որը ՀՀ-ում դառնում է ակտիվ վիդեոբլոգերային հարթակ:

[6] Տե՛ս *Ա.Ղալեչյան,* Տեղեկատվական մեթոդների միջոցով ԶՈՒ անձնակազմի գիտակցության վրա ներազդելու որոշ հարցեր, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱՐ», #6 (76) 2017, էջ 19:

[7] Օրինակ՝ համացանցում տարածված Ֆրեդի արջի մասին մանկական մուլտը կամ համակարգչային սարսափ խաղեր - Rezident Evil-ը, Evil within-ը և այլն:

[8] Տե՛ս *Ա.Ղալեչյան*, Տեղեկատվական մեթոդների միջոցով ԶՈՒ անձնակազմի գիտակցության վրա ներազդելու որոշ հարցեր, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱՐ», 6 (76), 2017:

տություններ ու իրավունքներ», կազմակերպել «բարեփոխումներ», հրահրել խռովություններ և գունավոր հեղափոխություններ[9]:

Ակնհայտ է, որ այս արհեստածին տեղեկատվական «նոր աշխարհի» մոդելը հասարակությունների մեջ ունենում է իր *երկարաժամկետ բացասական հետևանքները*: Նոր աշխարհը, որում ներկայում ընթանում են տարբեր պատերազմներ, կտրուկ մեծացրել է տեղեկատվական տարածության մեջ «ռազմական գործողությունների» հնարավորությունները: Այսօր ամեն ինչ կարող է կողմ կամ դեմ աշխատել ցանկացած պետությանը: Այս «նոր աշխարհի» ընդհանուր ուրվագծի փոփոխություններն արդեն յուրացվում են որոշ պետությունների կողմից: Վաղուց ընթանում են կիբեռ- և տեղեկատվական պատերազմներ: Ընդհանրապես, ըստ էության շատ է մեծացել «անվտանգություն» հասկացության դերը, քանի որ եթե անվտանգությունը դիտարկվում էր բացառապես ռազմական տեսանկյունից, իսկ նրա գործիքակազմը բացառապես ռազմական էր, մասնավորապես՝ ավիացիա, հրասայլեր, հրթիռներ, գերճշգրիտ սպառազինություն (ինքնակառավարվող հրթիռներ, ՌԷՊ ժամանակակից միջոցներ, անօդաչու թռչող հարվածային համակարգեր) և այլն, ապա պատկերացնենք. եթե հիմա գերճշգրիտ հրթիռ բաց թողնենք՝ ներկայիս պայմաններում այն բավական թանկ հաճույք է[10], բայց դրա փոխարեն հիմա կարելի է բաց թողնել «տեղեկատվական գերճշգրիտ հրթիռ» և այդ գործողությունը կրկնել մի քանի անգամ, ապա դրա արդյունքը մի քանի անգամ կգերազանցի նախորդի արդյունքը, քանի որ այդպիսով կատարվում է հակառակորդի «ուղեղների լվացում», ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում հետագա գործողությունների համար: Դրա վառ օրինակներից է *The Washington Post*-ի 2008թ. հոկտեմբերի 3-ի հոդվածը, որում բառացիորեն գրված էր. «ԱՄՆ պաշտպանության նախարարությունն Իրաքում անհատ գործարարներին վճարել է մինչև $300 մլն՝ իրաքյան ԶԼՄ-ում քաղաքական նյութերի, նորությունների, ժամանցային

[9] Տե՛ս *Գ.Հարությունյան*, Գունավոր հեղափոխություններ, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱՐ», 4 (68), 2016:

[10] Օրինակ՝ համեմատական կարգով ամենից էժան ինքնաղեկավարվող (ինքնաթիռներից արձակվող) մեկ «XA 25» հրթիռն արժե մոտ $10.000, իսկ «ցամաք-ցամաք» տիպի մեկ գերճշգրիտ հրթիռների արժեքը տատանվում է $2-ից 3 մլն-ի սահմաններում:

ծրագրերի և սոցիալական գովազդների պատրաստման համար, որպեսզի տեղի բնակչությունը համակրի ԱՄՆ քաղաքականությունը»: Զուգահեռաբար, թե՛ մինչ մարտական գործողությունները սկսելը, թե՛ գործողությունների ընթացքում ԱՄՆ-ը, օգտագործելով տեղեկատվական բոլոր հնարավոր գործիքները, համաշխարհային հանրությունում Իրաքի ղեկավարության նկատմամբ, ի դեմս Սադամ Հուսեյնի, ձևավորել էր բացասական կարծիք՝ նրան ներկայացնելով որպես սատանայական կերպար:

Ներկայում աշխարհի մի շարք զարգացած պետությունների բանակներն արդեն ունեն հատուկ ստորաբաժանումներ, որոնք սոցիալական ցանցերը լցնում են «գրավիչ» տեղեկույթներով: Այդ պետությունները ստեղծում են հզոր համակարգեր, որոնք կարողանում են «վերամշակել» ցանկացած տեղեկատվություն իրենց օգտին: Այսօր այդ դերակատարմամբ հանդես է գալիս հեռուստատեսությունը[11] (մասամբ նաև համացանցը)՝ ռազմավարական նպատակների օգտին արտաբերելով մարտավարական փաստեր:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ մարդկությունն այսօր ապրում է փափուկ և կոշտ ղեկավարման մոդելների ներքո: Կոշտ ղեկավարումը «ներարկվում» է մարդկանց, ովքեր կրում են «ծառայողական համազգեստներ», իսկ փափուկ ղեկավարումը՝ այն մարդկանց, ովքեր ունեն համացանցին միացված համակարգիչներ, որոնք անցյալում ունեցել են գրիչներ ու տպագրական մեքենաներ: Իրականում փափուկ ձևը կրթությունն է, գրականությունը, արվեստը, իսկ ներկայում՝ իհարկե, հեռուստասերիալները… Գաղափարախոսությունը և կրոնը նույնպես փափուկ ղեկավարման մոդելներ են, եթե մենք ենթարկվում ենք դրանց:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ «Տեղեկատվական պատերազմը մի տեղեկատվության հարձակումն է մեկ այլ տեղեկատվության վրա, որի արդյունքում մեր գլուխներում առաջանում է իրականության այլ պատկեր և մենք դառնում ենք այլ մարդ»[12]: Աշխարհընկալման ցանկացած լղոզում մեզ դրդում է ոչ ճիշտ որոշումների, որն անթույլատրելի է ցանկացած մակարդակի, դիրքի և պաշտոնի մարդու համար:

[11] Տե՛ս *Ս.Մանուկյան, Դ.Գալստյան, Լ.Հակոբյան*, Աշխարհի կերպարը Հայաստանի հեռուստատեսային լուրերում, «Նորավանք» ԳԿՀ, «Գլոբուս» ամսագիր, #10 (89) 2017, էջ 11:

[12] https://zn.ua/article/print/socium/informacionnyy-poedinok-ili-kak-chelovek-v-galstuke-pobezhdaet-cheloveka-v-tapochkah-270585_.html

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Վահրամ Հովյան[*]

ԱՄԷ հայ համայնքը Սփյուռքի համեմատաբար երիտասարդ համայնքներից է: Նրա ձևավորումը վերագրվում է 1960-1970-ական թթ., երբ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից, հիմնականում՝ Լիբանանից, Սիրիայից, Իրաքից և Իրանից, տեղի է ունենում հայերի գաղթ դեպի այս երկիր: Այս գործընթացին նպաստել են ԱՄԷ քաղաքական կայունությունը՝ ի տարբերություն Մերձավոր և Միջին Արևելքի երկրների, կրոնական սահմանափակումների բացակայությունը՝ չնայած այդ երկրի կրոնական բնույթին:

Այնուամենայնիվ, դեպի ԱՄԷ հայերի գաղթի հիմնական պատճառը գործարարությամբ զբաղվելու ավելի լայն հնարավորություններն են: Ուստի, չնայած ՀՀ անկախացումից հետո Հայաստանից նույնպես տեղի է ունեցել որոշակի արտագաղթ դեպի ԱՄԷ, ինչպես նաև սիրիական վերջին ճգնաժամի արդյունքում (սկսած 2011թ.) որոշ քանակությամբ սիրիահայեր նույնպես հայտնվել են այդ երկրում, այնուամենայնիվ, կարող ենք ասել, որ ԱՄԷ հայ համայնքը գլխավորապես բաղկացած է գործարարությամբ զբաղվելու նպատակով Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից այստեղ տեղափոխված հայերից:

Համաձայն վերջին տվյալների՝ հայերի թվաքանակը ԱՄԷ-ում կազմում է մոտ 10 հազ.[1]: Նրանք կենտրոնացած են հիմնականում Շարժայում, Դուբայում և մայրաքաղաք Աբու Դաբիում:

Համայնքը մտնում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների թեմի կազմում: Այստեղ գործում է երկու Հայ Առաքելական եկեղեցի: Առաջինը Շարժայի Սուրբ Գրիգոր Լուսավո-

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ:

[1] ԱՄԷ ավելի քան 10 հազարանոց հայկական համայնքը համախմբվում է ազգային կառույցների շուրջ, http://hayernaysor.am/archives/219430

րիչ եկեղեցին է, որը հիմնվել է 1998թ.: Երկրորդը Աբու Դաբիի Սրբոց Նահատակաց եկեղեցին է, որի հիմնարկեքը տեղի է ունեցել 2012թ., օծումը՝ 2014թ.: Երկու եկեղեցիներին կից գործում են մեկօրյա դպրոցներ: Աբու Դաբիի եկեղեցու դպրոցում (գործում է 2016թ. մայիսից) սովորում է մոտ 40 աշակերտ[2]:

Համայնքը ղեկավարվում է հոգևոր-կրոնական իշխանության կողմից: Բարձրագույն և օրենսդիր իշխանությունը թեմական մարմինն է: Որպես գործադիր մարմիններ տեղերում գործում են ազգային վարչությունները[3]:

Համայնքում սուր չէ ինքնության խնդիրը, ինչն, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է երկու կարևոր հանգամանքով՝ ա) քաղաքացիության արգելքը ներգաղթյալների նկատմամբ, որը խոչընդոտում է միջավայրի հետ ձուլմանը[4], բ) ԱՄԷ իշխանությունների բարյացակամ վերաբերմունքը հայերի նկատմամբ, որը նպաստում է համայնքային կառույցների ստեղծմանը[5]: Ընդհանուր առմամբ, եթե ԱՄԷ հայ համայնքը դիտարկենք հայկական սփյուռքի առջև ծառացած մարտահրավերների տեսանկյունից[6], ապա այն ներկայում կարելի է համարել Սփյուռքի առավել քիչ վտանգված համայնքներից մեկը:

Համայնքի ներուժը

ԱՄԷ հայ համայնքի ներուժը կարելի է դիտարկել երեք հարթությունում՝ տնտեսական, տեղեկատվական և գիտական:

Տնտեսական ներուժ. ԱՄԷ հայ համայնքը հիմնականում բարեկեցիկ է և ներուժի տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում առավելապես տնտեսապես: Այստեղ առկա են մեծ թվով գործարարներ, որոնք աշխատում են շինարարության և այլ բնագավառներում: Նշանավոր գոր-

[2] Աբու Դաբիի հայկական վարժարանում ուսանում է շուրջ 40 երեխա, http://hayernaysor.am/archives/219570

[3] *Հարությունյան Լ., Փաշայան Ա.*, Ծոցի արաբական երկրների հայ համայնքները. արդի հիմնախնդիրներ, Եր., «Լուսակն», 2013, էջ 37:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 49:

[5] Տե՛ս Sheikh Nahyan opens Armenian church in Abu Dhabi,https://www.thenational.ae/uae/government/sheikh-nahyan-opens-armenian-church-in-abu-dhabi-1.189993

[6] Մանրամասն տե՛ս *Հովյան Վ.,* Հայկական սփյուռքի անվտանգության մարտահրավերները, 21-րդ ԴԱՐ, 2017, թիվ 3, էջ 107-125:

ծարարներից է, օրինակ, Արա Խանոյանը, որն Աբու Դաբիի Սրբոց Նահատակաց եկեղեցուն կից մեկօրյա դպրոցի բարերարն է: Նրա պատվին դպրոցը կրում է «Արա Խանոյան» անունը: Նշանավոր գործարար-բարերարներ են նաև Հրայր Սողոմոնյանն ու Հարություն Օհանեսյանը: Վերջինս էլ Շարժայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից «Օհանեսյան» դպրոցի բարերարն է[7]: Համայնքն ունի ոչ միայն հաջողակ գործարարներ, այլև այդ երկրի ֆինանսատնտեսական նշանավոր հաստատություններում բարձր դիրքերի հասած ներկայացուցիչներ: Նրանցից է Շարժայի բանկի գործադիր տնօրեն և գլխավոր կառավարիչ Վարուժան Ներգիզյանը:

Տեղեկատվական ներուժ. ԱՄԷ հայ համայնքի հիմնական տեղեկատվական հաստատությունը «Այգ» առցանց ռադիոկայանն է: Այն ավելին է, քան համայնքային հաստատությունը, քանի որ նրա հաղորդումները հեռարձակվում են նաև «Երկիր Մեդիա» և «Արմենիա» (ԱՄՆ-ում), Անթիլիասի (Լիբանան) «Կիլիկիա» հեռուստատեսություններով, ինչպես նաև «Ասպարեզ» (ԱՄՆ) և «Հորիզոն» (Կանադա) թերթի կայքերով[8]: Շուրջօրյա ռեժիմով աշխատող ռադիոկայանի հաղորդումները բազմաժանր են՝ տեղեկատվական, պատմական, երաժշտական և այլն: Ռադիո «Այգը» ակտիվ համագործակցում է ինչպես Սփյուռքի, այնպես էլ Հայաստանի լրատվամիջոցների հետ:

Որպես տեղեկատվական կառույց նշանավոր է նաև «Ազատ Հայ» կայքը (http://www.azad-hye.net): Անգլիալեզու այս լրատվամիջոցը նույնպես զուտ համայնքային հաստատություն չէ, քանի որ, բացի ԱՄԷ հայ համայնքից, տեղեկատվություն է տարածում նաև Սփյուռքի այլ համայնքների, ինչպես նաև համահայկական կարևոր իրադարձությունների վերաբերյալ: Տեղեկատվական հաստատությունների թվում կարելի է նշել նաև Դուբայի և Հյուսիսային Էմիրությունների Հայկական ազգային վարչության կայքը (*http://am.emahay.com*), որը տեղեկատվություն է պարունակում ինչպես վարչության գործունեության, եկեղեցական կյանքի, այն-

[7] *Հարությունյան Լ., Փաշայան Ա.*, նշվ. աշխ., էջ 43, 58:

[8] «ԱՅԳ» առցանց ռադիոկայանի հիմնադիր-ղեկավարին Սփյուռքի նախարարը հանձնեց «Մայրենիի դեսպան» մեդալը, http://hayernaysor.am/archives/263447

պես էլ գաղութային իրադարձությունների մասին: Երկու կայքերում էլ նյութերի թարմացման հաճախականությունը ներկայում ցածր է: Մեկ այլ համացանցային ռեսուրս է «Նշանակ» հայագիտական ուղղվածությամբ կայքը (*www.nshanag.net*), որը, սակայն, վերջին անգամ թարմացվել է 2012թ.:

Բացի լրատվամիջոցներից, հայկական տեղեկատվական ներուժի մաս են կազմում նաև օտարերկրյա լրատվամիջոցներում աշխատող հայ լրագրողները: ԱՄԷ-ում այդպիսին է «Ծոցի նորություններ» («*Gulf News*») օրաթերթի լրագրող Ռազմիկ Բեդիրյանը:

Գիտական ներուժ. Այն հիմնականում ներկայացնում է ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցության (ՃՃՀԸ) ԱՄԷ ներկայացուցչությունը՝ որպես տեղի գիտական ներուժը համախմբող կառույց: Ներկայացուցչության գործունեությունը համակարգում է ճարտարապետ Գյուլիզար Ջանոյանը:

Գիտական գործունեություն համայնքում ծավալվում է նաև այլ, հիմնականում՝ եկեղեցական հաստատությունների շրջանակներում և հովանու ներքո: Այն դրսևորվում է գրքերի շնորհանդեսներով, առանձին թեմաներով դասախոսություններով: Օրինակ՝ 2017թ. հոկտեմբերի 27-ին Շարժայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համալիրի Պիեռ Քյոսեյան սրահում տեղի է ունեցել «Երիտասարդ ընտանիքի Աստվածաշունչը» գրքի շնորհանդեսը, որը հրատարակվել էր Արաբական ծոցի Սուրբ գրոց ընկերության կողմից[9]: 2017թ. հունվարի 27-ին նույն սրահում տեղի է ունեցել դասախոսություն՝ «Հայկական ինքնությունը» թեմայով: Դասախոսությամբ հանդես է եկել Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն Անդրանիկ Դաքեսյանը[10]:

Կապը Սփյուռքի և Հայաստանի հետ

Համայնքն ակտիվ շփումների մեջ է Սփյուռքի այլ, մասնավորապես՝ Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների հետ: Սերտորեն ինտեգրված լինելով այդ տարածաշրջանի հայկական սփյուռքի հետ՝ այն հանդիսա-

[9] «Երիտասարդ ընտանիքին Աստուածաշունչը» գիրքի շնորհանդէս, http://hayernaysor.am/cl/archives/263934

[10] Շարժայի մէջ դասախօսութիւն հայկական ինքնութեան մասին, http://hayernaysor.am/cl/archives/230668

նում է վերջինիս անբաժանելի մասը։ Դրա վկայություններից է 2017թ. օգոստոսին համայնքի երիտասարդների մասնակցությունը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Երիտասարդական բաժանմունքի կազմակերպած շրջանային միջթեմական երիտասարդական համագումարին[11]։

ԱՄԷ հայ համայնքը նաև բովանդակ մասն է կազմում ողջ Սփյուռքի, ինչի արտահայտությունն է համայնքի ներկայացուցիչների մասնակցությունը համահայկական միջոցառումներին։ 2017թ. ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված «Սփյուռք» ամառային դպրոցին իր մասնակցությունն է բերել նաև ԱՄԷ «Ռադիո Այգի» հիմնադիր-ղեկավար Ռուզան Մանգասարյանը՝ հեռավար (առցանց) դասախոսություն կարդալով դպրոցի ունկնդիրների համար[12]։ Շարժա բանկի գործադիր տնօրեն և գլխավոր կառավարիչ Վարուժան Ներգիզյանը նույն թվականի սեպտեմբերին մասնակցություն է ունեցել ՀՀ Սփյուռքի նախարարության կազմակերպած՝ Սփյուռքի գործարար և մասնագիտական ցանցերի հնարավորություններին նվիրված քննարկմանը՝ հանդես գալով «Համաշխարհային շուկաների ընձեռած նոր հնարավորությունները հայ գործարարի համար» զեկուցմամբ։

Համայնքի՝ բովանդակ սփյուռքի մասը լինելու արտահայտությունն է նաև ՃՃՀԸ տեղի ներկայացուցչության գործունեությունը։

Ակտիվ է ԱՄԷ հայ համայնքի կապը նաև մայր հայրենիքի հետ, ինչի վկայություններից են ինչպես ՀՀ բարձրագուն իշխանությունների շփումները համայնքի հետ (ԱՄԷ կատարած այցերի ընթացքում), այնպես էլ վերջիններիս կողմից համայնքի ակտիվ ներկայացուցիչների պարգևատրումները ՀՀ պետական պարգևներով։ Օրինակ՝ 2016թ. նոյեմբերին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը ԱՄԷ կատարած պաշտոնական այցելության ընթացքում հանդիպումներ է ունեցել Աբու Դաբիի հայ համայնքի հետ։ Դրանից մեկ տարի առաջ ԱՄԷ հայ համայնք այցելել էր ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը։

[11] Տե՛ս «Վերանորոգուինք ու վերանորոգենք՝ մասնակցելով» Համագումարի միացեալ յայտարարութիւն, http://hayernaysor.am/cl/archives/257465

[12] «Սփյուռք» ամառային դպրոց. «Լրագրողների վերապատրաստում» դասընթացի մեկշաբաթյա ընթացքը, http://hayernaysor.am/archives/252951

Նշենք նաև, որ 2017թ. համայնքի ղեկավարներից Աբու Դաբիի կիրակնօրյա վարժարանի բարերար Արա Խանոյանը Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման և զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի, երկարամյա հայրենանվեր գործունեության համար ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի կողմից պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով[13]: Նույն պարգևին են արժանացել նաև բարերարներ Հրայր Սողոմոնյանն[14] ու Հարություն Օհանեսյանը[15]:

ԱՄԷ հայ համայնքից, թեև փոքր չափով, տեղի է ունենում նաև հայրենադարձություն: Հայրենադարձ ընտանիք է Հրաչ Գևորգյանի բազմանդամ ընտանիքը (երկու ծնող և հինգ երեխա), որոնք Հայաստան են եկել Դուբայից[16]:

Հիմնական խնդիրները

ԱՄԷ հայ համայնքը նաև խնդիրներ ունի, որոնք, տևական ժամանակ լուծում չստանալու պարագայում, միջնաժամկետ կամ երկարաժամկետ հեռանկարում կարող են համայնքը կանգնեցնել լուրջ մարտահրավերների առջև: Դրանք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

1. Համայնքում առկա չեն ամենօրյա դպրոցներ, ինչի հետևանքով վաղ թե ուշ սրվելու է ինքնության պահպանման խնդիրը:
2. Առկա չեն հայագիտական հաստատություններ և առհասարակ հայկական գիտահետազոտական կառույցներ (բացի ՃՃՀԸ ներկայացուցչությունից), ինչը խոչընդոտում է գիտական ներուժի ինստիտուցիոնալացմանը, ինչպես նաև ապագայում կարող է սրել ինքնության պահպանման խնդիրները:
3. Բացի Հայ Առաքելական եկեղեցուց, Համազգային հայ կրթական և մշակութային միությունից և ՀՕՄ-ից, համազգային մյուս ավանդական կառույցները՝ երեք կուսակցությունները, ՀԲԸՄ-ն, ՀՄԸՄ-ն և

[13] Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը Ա.Խանոյանին Մովսես Խորենացու մեդալով պարգևատրելու մասին, http://www.president.am/hy/decrees/item/3311/
[14] Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը Հ.Սողոմոնյանին Մովսես Խորենացու մեդալով պարգևատրելու մասին, http://www.president.am/hy/decrees/item/3310/
[15] Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը Հ.Օհանեսյանին Մովսես Խորենացու մեդալով պարգևատրելու մասին, http://www.president.am/hy/decrees/item/3312/
[16] Տե՛ս «Ես իմ 5 երեխաներին բերեցի՝ իբրև նվեր Հայրենիքիս». Հրաչ Գևորգյան, http://hayernaysor.am/archives/265556

այլն, չունեն մասնաճյուղեր ԱՄԷ-ում, ինչը նշանակում է, որ համայնքը դեռևս ըստ արժանվույն չի կարևորվում վերջիններիս կողմից:

4. Համայնքում չկան տպագիր մամուլի օրգաններ: Չնայած «Այգ» ռադիոկայանի գործունեությանը՝ այս հանգամանքը, համադրվելով վերոհիշյալ համացանցային կայքերի խնդիրների հետ (անգլերեն լեզու, թարմացման ցածր հաճախականություն), համայնքը ոչ շահեկան վիճակում է դնում Սփյուռքի այլ համայնքների համեմատ:
5. Համայնքը գրեթե չունի քաղաքական ներուժ: Հատկապես չկան քաղաքական նպատակներով գործունեություն ծավալող հաստատություններ: Այդ է պատճառը, որ, բացի Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ԱՄԷ հանձնաժողովի գործունեությունից[17], համայնքը հիմնականում աչքի չի ընկել քաղաքական ակտիվության այլ դրսևորումներով:

[17] Տե՛ս, օրինակ, Round Table Discussion in Sharjah: Armenian Genocide Reparations File, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=621ajhj41

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 4 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 20.03.2018թ.
Թիվ 2 (91), 2018թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում